

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ձկնորսություն և ձկնաբուծություն
0.2	Ոլորտը	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժին Բաժնի պետ Արսեն Ավագյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 44 49, +374 11 56 46 72 Էլ. փոստ՝ <a href="mailto:arsav@armstat.am">arsav@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Օգտագործողներին տրամադրել ՀՀ-ում ձկնորսության ու ձկնաբուծության ոլորտում կատարված որսի ու իրացման վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն: Ձկնորսության ու ձկնաբուծության վերաբերյալ վիճագրությունը վարվում է 2004 թվականից: Սկսած 2007 թվականից ձկնաբուծության ոլորտում կատարված որսի, այդ թվում իրացման ծավալների վերաբերյալ տեղեկատվություն է ստացվում նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչական ռեգիստրից: Հաշվառումը մշտապես կատարելագործվել է՝ հաշվի առնելով դիտարկման դաշտում նոր առաջացող կազմակերպությունների ընդգրկվածության հետ կապված փոփոխությունները:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:  Ցուցանիշը կիրառվում է ռազմավարությունների մշակման,

		մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Մինչև 2007թ. ցուցանիշի հաշվարկման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով ձևորսությամբ ու ձկնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից հավաքվող տեղեկատվությունն էր: Սկսած 2007թ. Ամստատի դիտարկման դաշտում գտնվող համապատասխան գործունեությամբ զբաղվող կազմակերպություններից բացի ձկնաբուծության վերաբերյալ տվյալները ամսական պարբերականությամբ Արմստատին է ներկայացնում նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որն հանդիսանում է վարչական ռեգիստր: 2019թ. հյունվարից ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը տեղեկատվությունը Արմստատին կներկայացնի եռամսյակային պարբերականությամբ:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ձկնորսության ու ձկնաբուծության վիճակագրությունն ընդգրկում է այդ ոլորտներից կատարված որսի, այդ թվում իրացված ձկնամթերքի վերաբերյալ վիճակագրությունը:
1.2	Վիճակագրական հասկացություններ	Տեղեկատվության հավաքումն ընդգրկում է ՀՀ ամբողջ տարածքը՝ ներառելով Արմստատի դիտարկման դաշտում գտնվող ձկնորսությամբ ու ձկնաբուծությամբ զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերին: Տեղեկատվությունը հավաքվում է ըստ ձկան, խեցեմորթերի և այլ տեսակների: Ձկնորսության և ձկնաբուծության ոլորտի վերաբերյալ

		տեղեկատվությունը հավաքվում է առափնյա կամ ներքին քաղցրահամ ջրերում ապրող ձկների, խեցեմորթերի և կակղամորթերի, կրիաների, իժերի, ծովային ոզնիների, բնական մարգարիտի, սպունգների, ջրիմուռների և նմանատիպ այլ ծովամթերքի որս, ինչպես նաև ձկնսբուծարանների և ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամեղիորատիվ աշխատանքներ իրականացնող, նորածին մանրաձկների աճեցմամբ, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից:
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36 –րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Մշտապես ժամանակին հրապարակում
2.4	Հաճախականությունը	Ամսական/եռամսյակային
<b>3 .Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Հաշվառումը կատարվում է Արմստատի դիտարկման դաշտում գտնվող ձկնորսությամբ ու ձկնսբուծությամբ զբաղվող կազմակերպություններից: Տեղեկատվություն է տրամադրում նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:
3.2	Անճշտության աղբյուրները	Հավաքվող տեղեկատվության տեսակների փոփոխություն չի իրականացվում:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ճշգրտումներ և չափումներ չեն իրականացվում:
<b>4 .Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Երկար ժամանակաշրջանի համար տվյալները մնում են անփոփոխ:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Ոլորտի վերաբերյալ այլ վիճակագրություն չի վարվում
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Ճշգրտումներ չեն իրականացվում
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	Էլեկտրոնային, թղթային

5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Սկզբնական տեղեկատվությունը պահպանվում է համակարգում:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a> :
5.4	Այլ տեղեկատվություն	
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: